ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-895-29.07.2024-ԳԿ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-895-29.07.2024-ԳԿ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ *Նախագծից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են համապատասխան նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ ամսվա ընթացքում*: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն ***այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ,*** կամ դրա կատարումն **ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ**, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) *ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը».*

Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ նախագծի (օրենքի) անցումային դրույթում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետ սահմանվում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝ • համապատասխան նախագծով է ***նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունումը կամ*** • համապատասխան նախագծով նախատեսված դրույթի կատարումն ուղղակիորեն պայմանավորված է կամ չի կարող գործել առանց համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման: Հարկ է նկատել, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված կարգավորմամբ կամ դրա կատարումն ապահովելու համար որևէ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունում նախատեսված չէ. հետևաբար հասկանալի չէ Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը ինչ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունմանն է վերաբերում:

2. Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրը, այն է՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ», հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «*Օրենսդրական ակտի*

հոդվածները ունենում են վերնագրեր, ***բացառությամբ*** *փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի*»:

3. Միաժամանակ առաջարկում ենք նաև Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում առկա վրիպակը շտկել. մասնավորապես «տարկետում տրվում» ձևակերպումը փոխարինել «տարկետում է տրվում» ձևակերպմամբ:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված առաջարկությունների հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
(հեռ.՝ 011-513-248)
08.08.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

(հեռ.՝ 011-513-248)

08.08.2024թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրել մեկ անգամ՝ ամբողջ ուսումնառության ժամկետով: Նախագծով հստակեցվում է «առանց ընդհատման» հասկացությունը՝ տարկետման գործընթացում հնարավոր անորոշությունները վերացնելու նպատակով:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան

(հեռ.՝ 011 513-603)

02.08.2024թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

ՀՀ կառավարության կողմից ներկայացված Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք), ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու գործընթացների կատարելագործմամբ:

Նախագծով, հեղինակն առաջարկում է փոփոխություն կատարել Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական և հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կտրամադրվի մեկ անգամ՝ ամբողջ ուսումնառության ժամկետով:

Նախագծով առաջարկվում է նաև հստակեցնել «*առանց ընդհատման*» հասկացությունը, արդյունքում՝ ավելի կպարզեցվի տարկետման գործընթացը:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Եզրահանգում

Ներկայացված Նախագծի ընդունմամբ, հեղինակն ակնկալում է, որ ամբողջապես կկրճատվի փաստաթղթաշրջանառության ծավալուն ընթացակարգը, կբացառվեն տեխնիկական և վարչատնտեսական հնարավոր բացթողումները և վրիպակները: Էապես կբարձրանա տարկետման տրամադրման գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Նախագծով առաջարկվող փոփոխությունների ընդունումը կրթական հիմնախնդիրների տեսանկյունից կունենա դրական ազդեցություն:

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

05.08.2024թ.